

Տարիել Բարսեղյան
ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԲԱՐԵԽՆԴՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՔԱՊԱԳԱՑԻԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ծովայական հարաբերությունների ներկա փոլում տնտեսական հարաբերությունների մասնակիցների բարեխղճությունը ձեռք է բերել նոր որակ և նշանակություն, որի հետևանքով իր վրա է բևեռել իրավագետների ուշադրությունը: Ընդ որում, իրավագետներից յուրաքանչյուրը, յուրովի մեկնարանելով բարեխղճության կատեզորիայի օրենսդրական արժեորումները, այդ ինստիտուտին վերապահում է առանձնահատուկ դերակատարություն՝ ընդուած որպես սկզբունքի գործառույթ, իսկ Ո-Դ քաղաքացիական օրենսգրքի կատարելագործման հայեցակարգի հեղինակներն առաջարկում են բարեխղճության սկզբունքը ներմուծել քաղաքացիական օրենսդրություն, որպես քաղաքացիական ընդհանուր և կարևորագույն սկզբունք: Նման կարծիքներ արտահայտողները, մեր կարծիքով, անտեսում են մի էական հանգամանք. բարեխղճությունն արժեորելով որպես գնահատողական կատեզորիա, օրենսդրին այս օգտագործում է ոչ թե ընդհանրապես իրավունքների սահմանները ընդգծելու, այլ միայն որոշ՝ օրենքում հատկապես նշված իրավիճակներն արժեորելու համար¹: ՀՀ քաղաքացիական օրենսդրում (այսուհետ՝ Օրենսգրք) բացակայում են բարեխղճության հստակ սահմանված օրյեկտիվ չափանիշները, և բարեխղճությանը կոնկրետ իրավական նշանակություն վերագրելու, որևէ սկզբունք, որով դեկավարվում է օրենսդրը, բացահայտել հնարավոր չէ²: Բացի դրանից, Օրենսգրքը հնարավորություն չի ընձեռում բարեխղճությունը որպես սկզբունք դիտարկել նաև քաղաքացիական հարաբերություններ կարգավորող նորմերի վեր-

¹ Stú Ái aëyí á Á. Í ðáaæéðu íñðúlañðaæáí éý ãðaæááí ñeðø //Ðiññèéñéàý þøðøðéý, 1999, ííí. 6, tþ 14-15:

² St. Nēēī ānēēē Ē. Ē āī ī dīnō ī ī dēi aī aī ēē ī ī yōēē āī ādī nī ānōō ī nōē ē ī nī ī aū ī dāaā ī ī dōyāē ē ī ī dāaānōōāā ī ī nōē. Ōī cȳēnōāā ē ī ī dāaā, 2005, ī ī . 8, t₉ 139-140:

լուծության արդյունքում, քանի որ ինչպես բարեխնդության, այնպես էլ անբարեխնդության մատնանշումն օրենսդրի կողմից օգտագործվում է միայն այն անձի պաշտպանվածությունը բարձրացնելու նպատակով, ում բարեխնդությունը կամ անբարեխնդությունը ձեռք է բերում իրավական նշանակություն¹: Վերջապես, Օրենսգիրքը, արժեորելով բարեխնդությունը որպես իրավունքների առաջացման (ՀՀ քաղ. օր. 187 հոդվ.), դրանց պաշտպանության (275 հոդվ.), իրականացման հիմք կամ պայման (174 հոդվ.), «քարեխնդություն» կատեգորիան մի դեպքում ամրագրում է բարոյական (ժխտական) իմաստով (Քաղ. օր. 275 հոդվ.), ինչն էլ հիմք ընդունելով՝ քաղաքացիազները գույքը հասուցմամբ ձեռք բերողի բարեխնդությունը համարում են ոչ թե ուրիշի իրավունքները շխախտելու մասին անձի համոզվածություն, այլ գործարքի իրավական արատների մասին տեղեկացվածության բացակայություն²: Մեկ այլ դեպքում այդ կատեգորիան օգտագործվում է դրական գործողությունների կատարման իմաստով (Քաղ. օր 187 հոդվ.), որի հուրյան բացահայտմանը իրավագետները անդրադառնում են միայն հավանցիկ կամ ընդհանրապես չեն անդրադառնում: Բնական է, որ նման մոտեցման պարագայում բարեխնդությունը, որպես քաղաքացիական իրավունքի սկզբունք դիտարկելու մասին խոսք լինել չէր կարող և օրենսդիրն էլ, բարեխնդությունը որպես սկզբունք չի նախատեսում³:

Բարեխսդությունը, որպես սկզբունք, չի դիտարկվում նաև գիտնականների ճնշող մեծամասնության կողմից: Գիտական գրականությունում այդ կատեգորիայի մասին, որպես կանոն, հիշատակվում է իրա-

¹ Տե՛ս Աշված հոդվածը, էջ 142:

² Stiu Í áððæxéööéé E.E., Í ðáðá á áðí níðánþóí í ááñ áððæxéööá í à áí ðí áú n í ðí + èè çðái éý áí áú û è í íñéðéèé áððæxéáí níðánþóí í ðáðá. -Í .. 2002, tþ 195-204, Ðýáí á Á.Á., Eñóððááí ááí éá èí óúáñóðá ó ááí áðí níðánþóí í ááñ í ðéí áðáðáðáéý // Çáêíí, 2004, 111 2, tþ 394.

վունքների չարաշահման դեպքում կամ բարեխիղճ ձեռք բերողից գույքը հետ պահանջնելիս¹:

Չնայած այդ իրողությանը, կան որոշ իրավագետներ, որոնք, այնուհանդերձ, գտնում են, որ բարեխսդուրբայունը քաղաքացիական օրենսդրությամբ ամրագրված սկզբունք է²: Այդպիսի կարծիք առավել ցայտուն արտահայտել է Վ. Վորոնոյը: Նա, հիմք ընդունելով ՌԴ քաղ. օր. 6-րդ հոդվածի 2-րդ կետը, պնդում է, որ «քարեխսդուրբայն պահանջը օրյեկտիվորեն գոյուրբյուն ունի», իսկ ՌԴ քաղ. օր. 10 հոդվածի 3-րդ կետի ձևակերպումից ելնելով, եզրակացնում է օրենսդրությունում բարեխսդուրբայն սկզբունքի առկայության մասին³: Իրոք, Քաղ. օր. նորմերի ուսումնասիրությունը անառարկելի ցույց է տալիս, որ բարեխսդուրբայն պահանջը օրյեկտիվորեն գոյուրբյուն ունի, բայց ՌԴ քաղ. օր. 10 հոդվածի 3-րդ կետի ձևակերպումից (նման ձևակերպում ՀՀ քաղ. օր. 12 հոդվածը, ցավոք, չի պարունակում) չի հետևում, որ բարեխսդուրբայնը քաղաքացիական իրավունքի սկզբունք է: ՌԴ քաղ. օր. 10-րդ հոդվածը սահմանում է, որ այն դեպքերում, եթե օրենքը քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը կախվածության մեջ է մնում դրանց իրականացման բանականությունից և բարեխսդուրբայնից, քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների գործողությունների բանականությունը և բարեխսդուրբայունը ենթադրվում են: Իրավահարաբերության մասնակիցի բարեխսդուրբայունը ենթադրելը և բարեխսդուրբայունը, որպես սկզբունք ամրագրելը, մեր կարծիքով, միմյանցից էապես տարրերվում են, հետևաբար ճշմարտացի են այն հեղինակները, որոնք գտնում են, որ ՌԴ քաղ. օր. 10-րդ հոդվածը բարեխսդուրբայունը նախատեսում է ոչ թե որպես սկզբունք, այլ քաղաքացիական իրավունքի սուբյեկտների վարքագծի կանխավարկած⁴:

¹ St'u Ḳ̓ədən̓í i àà N.Á. I iðáaæéaí ey i iñ yòey “áî ááî nñ̓ áâñòóí i ñòó” á ði nñ̓éñéñ i ñðáaæáaí ñéñ i i ðáaå, Aéóðí aë ði mñ̓éñéñ i áî i ðáaå 2003 i iñ . 3, lq 62;

² St'u Ááéít Á.Á. Áí adí ní áánóní i nòù, ðácóí i í nòù, ní ðáàááéééít nòù éáé i ðééítééít ú ðáðáæääí níéít áí i ðáàá // Çáéít i í ááðáéëññóáí, 1998, 11. 8. Áí ðíi íé Á. Áí adí ní áánóní i nòù éáé ðáðáæääí níéít -i ðááé ááý éááðááí ðééyt // Çáéít i í ááðáéëññóáí, 2002, 11. 6. Ááðáæääí níéít á i ðááí. Á. 2-ð ó. Ó. 1. O-ááí éé / I í á ðáá. Á.Á. Nóóai i áá- . I : Áí ééðáð Ëééháád 2004, qmhu 11.

Stlu Éocéáði Á N., Í ðíráéði Ú çáunéðöði éí ðáðaní á äí áðñi ní áanöði í aí i ðeí áðáðaðaëý //
Ói cývñðaí é iðaáí 2006 í ì 8 to 114.

Բանն այն է, որ տարբեր իրավահարաբերություններում բարեխսդության բնույթի ու բովանդակության փոխվելը հնարավորություն չի տալիս ձևակերպելու նրա բոլոր դրսորուններներն ընդգրկող այնպիսի ընդհանուր հասկացություն, որը հնարավորություն կտա այդ կատեգորիան դիտարկելու որպես սկզբունք, որի պատճառով էլ օրենսդիրը ձեռնպահ է մնում բարեխսդության ընդհանուր հասկացություն սահմանելու¹: Մասնավորապես, պարտավորական հարաբերությունների մասնակից՝ բարեխսդ ձեռք բերողից, օրենսդիրը պահանջում է ցուցաբերել ողամբ շրջահայացություն, իսկ իրային, մտավոր սեփականության և այլ հարաբերությունների մասնակիցներից՝ իրավունքների իրականացման և պարտականությունների կատարման պարտաճանաչություն:

Բարեխսդությունը սկզբունք չհամարելը ամենին էլ չի նշանակում, որ օրենսդիրը չի արժևորում քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների բարեխսդության հիմնարար նշանակությունը: Հակառակը, նկատի ունենալով սուբյեկտիվ իրավունքների իրականացման և պաշտպանության գործում բարեխսդության պահանջների պահպանման կարևորությունը, սուբյեկտի վարքագծին սահմանադրական մակարդակով ներկայացնում է այնպիսի պահանջներ, որոնք առանց բարեխսդության պահպանել անհնարին է: Օրինակ՝ Սահմանադրության 44 հոդվածը սահմանում է. – «Իրավունքների իրականացումը չպետք է խախտի պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքները, ազատությունները, պատիվն ու բարի համբավը», իսկ 48 հոդվածը նախատեսում է. – «Յուրաքանչյուր ոք իրավունքներն իրականացնելիս պարտավոր է պահպանել Սահմանադրությունը և օրենքները, հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը»: Բնական է, որ սահմանադրական այդ նորմերի պահանջների պահպանությունը կարող է ապահովել միայն անհրաժեշտ բարեխսդություն դրսորելու պարագայում: Ինչ վերաբերում է քաղաքացիական իրավահարաբերություններին, ապա իրավաչափ վարքագծի չափանիշ հանդիսացող գնահատողական այդ կատեգորիան, առանց անվան հիշատակման, արժևորում է՝ «իրավունքների իրականացումը չպետք է խախտի այլ սուբյեկտների օրենքով պահպանվող իրավունքները», «իրավունքներն իրականացնելիս պահպանելիս պահպանվեն ձևավորված բարքերը և

¹ Օրենսգրքը միայն բնութագրում է բարեխսդ ձեռք բերողին (275 հոդվ.):

գործարար շրջանառության սովորությունները», «իրավունքները պետք է իրականացվեն դրանց նշանակությանը համապատասխան», «պայմանագրի ազատության», «պարտավորությունների պատշաճ կատարման և այլ քաղաքացիական սկզբունքներում: Քաղաքացիական իրավունքի հիմնարար սկզբունքներում բարեխճության արժենորումը խոսում է այն նախն, որ բարեխճությունը ավելի քան սկզբունք է: Այն իրավական արժենորություն ունեցող բարոյաէրթիկական արժեք է՝ բարոյական հրամայական, որն ընկած է իրավունքի և դրա ցանկացած սկզբունքի հիմքում: Եթե սկզբունքները (մարդկանց որոշմամբ) կարող են փոփոխվել, ապա բարեխճությունն անփոփոխ կարեգորիա է, նրա կոնկրետ ընթացումը կախված է այն բանից, թե ինչպիսի կանոններ, սովորություններ և բարքեր են ձևադրվել տվյալ հասարակությունում: Բարեխճությունները իրավակարգավորման եղակետային և հիմնարար այն կատեգորիաներից մեկն է, որի պահանջներին պետք է համապատասխանի քաղաքացիական ցանկացած իրավահարարերություն, սուբյեկտի ցանկացած գործողություն:

Սասնավոր հարաբերություններում սուբյեկտի ցանկացած վարդագիծ զնահատվում է բանականության, բարեխսղճության, ազնվության և բարեվարդության դիրքերից: Այդ պատճառով էլ քաղաքացիական ցանկացած իրավահարաբերությունում մասնակիցների բարեխսղճությունը ենթադրվում է: Ոչ ոք, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, պարտավոր չէ ապացուցել իր բարեխսղճությունը: Անձի բարեխսղճության վրա կասկածողը ինքն է պարտավոր ապացուցել նրա անբարեխսղճությունը: «Գեռք բերողի բարեխսղճությունը ինքնին ենթադրում է վաճառողի կողմից գույքն օտարելու իրավունք ունենալու մասին կասկածների բացակայությունը»¹: Եթե ձեռք բերողին օրենսդրորեն պարտադրենք հավաստել իր բարեխսղճությունը, նշանակում է ենթադրում ենք ոչ միայն նրա, այլև վաճառողի իրավախախտող լինելը: Խսկ դա անմեղության կանխավարկածի, հետևաբար՝ մարորի իրավունքների կրայիտ խախտում է: Դեռևս 19-րդ դարի մտածողները նշում էին.- «Քանի որ յուրաքանչյուր տիրապետող օգտվում է անմեղության ընդհանուր իրավունքից, ապա ենթադրվում է, որ տիրապետությունն օրինական է, բանի ոեր հակառակ չի ա-

¹ Shu Äeñhpē È. Å., Äi ádī ñí áañoò i ñoò i ððèi ádåðái èý èåé i ñí áaài èå ái çí èéí i áaí èý i ðåðåá ñí áñóåáí i ñoè i à áaåèæèi i ñoù// Äéðí åé ðí ñmèñéñéi åí i ðåàå N 3 – 2007, Fg 7;

պացուցված այն անձի կողմից, ով վիճարկում է տիրապետման օրինականությունը¹: Հետևաբար տիրապետության բարեխղճությունը այլ անձի կողմից չվիճարկվելու դեպքում տիրապետողը պաշտպանված է տիրապետման բարեխղճության կանխավարկածով (արեգումցիայով): Նշված պատճառներից ենենք մենք համակարծիք ենք այն հեղինակ-ների հետ, ովքեր գտնում են, որ բարեխղճություն կատեգորիան ստուգասահմանելու նպատակ հետապնդելիք իմաստ չունի, քանի որ bona fides-ը (բարեխղճությունը) իր մեջ կրում է շատ անորոշություններ, շատ այնպիսի բաներ, որոնք առավելապես զգացվում և կրահվում են, քան ենթարկվում են տրանսպառական մասնատման²:

Ծարադրվածը իհմք է տալիս եգրակացնելու, որ բարեխսողության կանխավարկածի գործողության պարագայում գնահատողական այդ կատեգորիան որպես սկզբունք օրենսդրութեն ամրագրելը, բարեխսողության կանխավարկածի դերը նսեմացնելուց զատ, որևէ այլ արդյունք չի կարող տալ:

Բարեխսդությունը՝ որպես սոցիալ-բարոյական կատեգորիա, ներառում է բարոյական, կազմակերպական, ավանդույթային, սովորույթային, իրավական և այլ տարրեր, որոնցից յուրաքանչյուրը (Կամ մի քանիսի համակցությունը) ցայտուն դրսւորում է ձեռք բերում կախված այն հարաբերության բնույթից, որի կարգավորման համար օգտագործվում է, և այն նպատակից, որը հետապնդում է օրենսդիրը: Այդ պատճառով էլ հնարավոր չէ իրավական հարաբերությունների բոլոր դրսւորումների համար բարեխսդության որոշման բնոհանուր կանոններ սահմանել:

Հետևաբար հարկ է մտահոգվել ոչ թե բարեխղճությանը սկզբունքի կարգավիճակ շնորհելու, այլ գնահատողական այդ կատեգորիան օգտագործող տարրեր նորմերի համեմատա-տրամաբանական մեկնաբանության միջոցով կոնկրետ հարաբերությունների կարգավորման կամ պաշտպանության համար պահանջվող բարեխղճության բնույթն ու նշանակությունը պարզելու մասին:

Մասնավորապես, նման պահանջ է առաջանում, եթե ուսումնասիրում ենք իրավագետների ձեռքբերման վայելությամբ գույքը տիրապե-

¹ Stu Áñðåñðåáí í ñááí ðaaí ééë ðeeéíñ öðey í ðaaá. Öðeáðeóá Ááíéüðá Øeeéíáá. Í ñááðaaí á ñ íáí áðeíñ ááí, í íáá ðaaáðeóáé Í . É Eáí óñðeíáá. —Í : 1863 £9 31:

Stu Í áiñá Á.Á. Í iýóéá Í ðéiöéá ái áðí ñi áánóí ñòé á iýäçóðæñóáí ííí
íðåáá: ááðí iáenééá é ðí pæneééá ií áðí áñú // Þ ðéñó, 2005 ííí .9. 19. 5:

տողի բարեխսդության մասին արտահայտված տեսակետները: Քաղաքացիագետների մեծամասնությունը, որպես կանոն, հիմք ընդունելով գույքի ձեռքբերման պահին ցուցաբերվելիք բարեխսդության նկատմամբ օրենսդրի մոտեցումը (չի իմացել և պարտավոր չէր իմանալ, որ գույքը ձեռք է բերում օտարելու իրավունք չունեցող անձից), ըստ էության չի արժնորում ձեռքբերման վաղեմությամբ գույքը տիրապետողի տիրապետման ընթացքում ցուցաբերած վարքագիծը՝ նրա բարեվարդությունը և գոտնում է, որ բարեխսդության հասկացությունները ՈԴ քաղ. օր. 234 և 302 հոդվածներում (ՀՀ քաղ. օր. 187, 275 հհ.) համընկնում են¹:

Ընդ որում, ուշագրավ է այն փաստը, որ, ըստ էության, նույնացնելով «ձեռքբերման վաղեմության» և «բարեխսդության» ձեռք բերողից գույքը պահանջելու» իմաստուտմերի համար կիրավող «բարեխսդությունները», քննարկում են այն հարցը, թե բավարա՞ր է արդյոք, բարեխսդությունը միայն տիրապետման սկզբում, թե՞ այն պետք է ուղեկցի նաև տիրապետման ողջ ժամկետի ընթացքում:² Դ.Ի. Մեյերը նշում է.- «Եթե ուրիշի գույքի բարեխսդությունը տիրապետողը տեղեկացված է սեփականատիրոջ կողմից իրեն ներկայացված հայցի մասին, ապա նա այդ պահից չի կորցնում բարեխսդությունը, չնայած պատասխանատվության առունող հայտնվում է այնպիսի դրության մեջ, որը նման է անբարեխսդությունը տիրապետողի իրավական դրությանը»³: Համանման դիրքորոշում ունի նաև Կ. Ի. Ակլուվսկին, որը գտնում է, որ բարեխսդությունը տիրապետողի դեմ հայց հարուցվելու դեպքում տիրապետման բարեխսդությունը շարունակում է պահպանվել⁴: Դժվար չէ նկատել, որ նշված և նման դիրքորոշումը ունեցող այլ հեղինակները հավասարության նշան են դնում ձեռքբերման պահին և տիրապետման ընթացքում դրսորվող բարեխսդությունների միջև:

Նման մոտեցումը մեզ համար ընդունելի չէ: Մեր կարծիքով, օրենսդիրը ՀՀ քաղ. օր.-ում «բարեխսդություն» եզրույթը, որպես գնահատողական կատեգորիա, օգտագործում է առնվազն երկու իմաստով: Մի դեպ-

¹ Տե՛ս Սասեվիչ Ս. Գ. նշված հոդվածը, էջ 187:

² Տե՛ս Աճառական Ա.Ա., Նեղոն և անոն նո յնան. Լ 111 ձածածու: Լ .: Անձածած Էջանակ, 2006, կամ Սկլովսկի, Կ. Ի. Собственность в гражданском праве: М.: Дело, 2002, և այլն:

³ Տե՛ս Մեյեր Դ.И., Русское гражданское право. Ч.1, էջ 268:

⁴ Տե՛ս Սկլովский, К. И., Собственность в гражданском праве: М.: Дело, 2002, էջ 262:

բում (Քաղ.օր. 48, 275, 293 և այլ հոդվածներ՝)՝ որպես վարքագծին ներկայացվող պահանջ, երկրորդ դեպքում (Քաղ. օր. 174, 187 և այլ հոդվածներ) որպես վարքագծին տրվող գնահատական: Առաջին դեպքում բարեխսդությունը դիտվում է մեղքի բացակայության ցուցանիշ՝ բավար շրջահայացության ցուցաբերելու (հ. 275) պահանջ, երկրորդ դեպքում՝ օգտագործողի, տիրապետողի բարեվարքության չափանիշ, որը արժենորվում է պատշաճ վարքագծի դրսերմամբ (հ. 187): Ընդ որում, եթե մեղքի բացակայությանը հիմք է միայն ձեռք բերման (տիրանալու) պահին ցուցաբերված սուբյեկտիվ վերաբերմունքը գնահատելու համար, ապա տիրապետման (օգտագործման) դեպքում, օրենքից ուղղակի բխում է, որ բարեխսդությունը պետք է դրսերվի օրյեկտիվորեն՝ անընդհատ, տիրապետության (օգտագործման) ողջ ժամանակահատվածի ընթացքում, քանի որ 174, 187 հոդվածներում խոսվում է ոչ թե տիրանալու, այլ գույքը (որոշակի ժամկետի ընթացքում) տիրապետելու, բնականաբար նաև օգտագործելու բարեխսդության մասին: Հետևաբար ձեռքբերման վաղեմությամբ տիրապետողի բարեխսդության և բարեխիղճ ձեռք բերողի բարեխսդության համընկնման մասին կարծիքները, մեղմ ասած, հիմնավորված չեն:

Քաղ. օր. 187 և 275 հոդվածների համեմատությունը ցույց է տալիս, որ ձեռքբերման վաղեմության դեպքում (187 հոդվ.) խոսքը վերաբերում է իրային հարաբերության սուբյեկտի բարեվարքությանը՝ սուբյեկտի կողմից «քարեխսից վարքի պահանջների» պահանջնելիս (275 հոդվ.) պարտավորական հարաբերության սուբյեկտի չիմացությանը՝ նրա անմեղությանը: Այսինքն՝ առաջին դեպքում (187 հոդվ.) պահանջ է ներկայացվում պարտականությունների կատարմանը, իսկ երկրորդ դեպքում (275 հոդված) բարեխսդությունը փոխկապակցվում է մեղքի հետ:

«Քարեխսիղճ ձեռք բերողի» և «քարեխսիղճ տիրապետողի» բարեխսդությունները միմյանցից տարբերվում են նաև այն պատճառով, որ մեկը՝ բարեխսիղճ ձեռք բերողը, գույքը արդեն ձեռք է բերել, և նրանից հետ են պահանջում, իսկ մյուսը՝ տիրապետողը, բարեխսդություն է ցուցաբերում սեփականության իրավունքով գույք ձեռք բերելու համար: Այլ կերպ ա-

¹ Բարեվարքության մասին տե՛ս, Բարեխյան Տ. Կ. Բարեվարքության կանոնների դերը քաղաքացիական հարաբերությունների կարգավորման գործում, Գիտաժողովի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., 2008, էջ 5-18:

սած բարեխսիղճ ճեռք բերողի իրավական կեցությունը մեկնաժմիշտ որոշ-
վում է գույքին տիրանալու պահին և վոփոխման ենթակա չէ: Մինչդեռ
վաղենորոյամբ տիրապետողից պահանջվում է բարեխսորություն ցուցաբ-
երի անընդհատ, վաղենորոյան ողջ ժամկետի ընթացքում, և նրա իրավա-
կան կեցությունը բարեխսորոյան դրսորումից ելնելով, կարող է վո-
փոխման ամենալավ արդյունավետ լուծում լինել:

Բարեխիղճ ճեռք բերողը, ըստ 275 հոդվածի, այն անձն է, որը խելամիտ շրջահայցություն ցուցաբերելու պարագայում չի հնացել ու չէր էլկարող իմանալ իր կոնտրագենտի անօրինական գործողությունների մասին: Նա այն անձն է, որը, գործելով սուբյեկտիվորեն անթերի¹, առանց «մերժի», իր կոնտրագենտի անբարեխողության հետևանքով հայտնվում է դատարանում:

Ինչ վերաբերում է տիրապետման բարեխղճությանը, ապա այն իրավունքների իրականացման և պարտականությունների կատարման նկատմամբ բարեվարդության կանոնների պահպանմամբ՝ անընդհատ ցուցաբերվող վերաբերմունք է: Այն հանդիսանում է վաղենության ընթացքում տիրապետության պաշտպանության, իսկ ժամկետը լրանալոց հետո՝ սեփականության ճանաչման կարևոր պայման: Այս դեպքում բարեխղճությունը ենթադրում է տիրապետողի կողմից տիրապետման ողջ ընթացքում պարտականությունների ազնիվ, ջանադրաբար, ճշգրիտ և փութեռանդ կատարում: Այս դեպքում մենք գործ ունենք տիրապետողի կողմից բարեվարդության կանոնների պահպանմամբ լրաւորվող վար-քագծի հետ, վարքագիծ, որը պետք է դրանորվի ոչ միայն տիրապետողի սուրյեկտիվ վերաբերմունքով, այլև արտահայտվի նրա բազմաթիվ և բազմապիսի օբյեկտիվ գործողություններով, արաքներով, գործողությունների կատարումից ձեռնապահ մնալով:

Ինչ վերաբերում է հեղինակների կողմից արձարձվող՝ վաղենությամբ գույքը տիրապետողի (Քաղ. օր. 187 հոդվ.) և բարեխիղճ ձեռք բերողի (Քաղ. օր. 275 հոդվ.) բարեխստությունների փոխկապակցվածության հարցին², ապա, մեր կարծիքով, այդ հարցը քննարկման առարկա չպետք է հանդիսանա, որովհետև տարբեր են ինչպես հարաբերությունները, այնպես էլ կիրառման պայմաններն ու մեխանիզմները:

¹ Stú Ñóõàí îâ Å.À., Èáêöèè î ï ðàâå ñî áñòâáí í î ñòè.- Ì .: 1991, tø 214:

²Տե՛ս Մալիսի Մ.Գ., ճշված հոդվածը, էջ 185:

Վիճակացիոն հայցով գույքի ապօրինի բարեխսդ ձեռք բերման հանգամանքն ապացուցելու անհրաժեշտությունն առաջանում է գույքը ձեռք բերողի տիրապետությունը դադարեցնելու և գույքը վերադարձնելու մասին սեփականատիրոջ հայցը քննարկելու դեպքում, իսկ տիրապետման բարեխսդությունն՝ գույքի նկատմամբ ձեռքբերողի սեփականության իրավունքը ճանաչելու, փաստացի տիրապետությունը սեփականատեր շխանդակացող կամ այդ գույքի նկատմամբ այլ իրավունքներ չունեցող երրորդ անձանցից պաշտպանելու մասին հայցերը քննելիս¹: Այսինքն, բարեխսիղ ձեռք բերողի պաշտպանությունն իրականացվում է պետական դատավարությունում որտեղ հայցվորը հենվում է իր սեփականության իրավունքի կամ տիրապետման այլ տիտղոսի վրա, իսկ ձեռքբերման վաղեմությամբ տիրապետողի սեփականության իրավունքի ճանաչումը, ինչպես նաև իրավունքների պաշտպանությունն իրականացվում է պուեստրային պաշտպանությամբ:

Երկրորդ՝ վիճղիկացիայի դեպքում բարեխղճությունը իրավաբանական փաստ է, իրավունքների ձեռք բերման ժամանակ գործարք կնքող կողմի վարքագծի մասին տեղեկացվածության ցուցանիշ, բացարձակ վիճղիկացիան բացառող միջոց, և ընդամենը պահանջվում է, որ ձեռք բերողը գույքը հատուցմանը ձեռք բերելիս չինանա և պարտավոր էլ չինի իմանալ գույքն օտարողի ապօրինի գործողությունների մասին։ Եթե հետագայում այդ հանգանանքներն իրեն հայտնի դառնան, ապա դա չի փոխի նրա բարեխիղօց լինելը։ Այսինքն՝ վիճղիկացիոն հայցի պարագայում բարեխղճությունն ու անբարեխղճությունը բնութագրում են գույքը ձեռք բերելու օրինականության կամ անօրինականության մասին անձի տեղեկացվածությունը²։

Զենքը երման վաղեմուրյան դեպքում բարեխսդուրյունը հանդես է գալիս որպես փաստացի տիրապետողի բարեվարքուրյան, պատշաճ վարքագծի չափանիշ՝ իրավունքների իրականացման և պարտականությունների կատարման ցուցանիշ, տևական վարքի դրսերում. որը փաստացի տիրապետողին իրավունք է տալիս ունենալ սեփականատեր դառնայու հավակնություններ: Զենքը երման վաղեմուրյան պարագալում բա-

¹ Ըստ. օր. 187 հոդվածով սահմանված այդ կարևոր դրույքը փաստացի տիրապետողին, մինչև նրա կողմից ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք ձեռք բերելու, տախի է լրացուցիչ պաշտպանության հնարավորություն:

² Stú Éí i ái òðéé é Áðææáái níi í ó eí áænó Ðí mñééñéé é Óäääðaöeé (ó÷ááíí – i ðaéðeðe-áññééé) -] : Éí ñòðéðóð-áññóí í áí i ðaáà. 2009. þ 354:

բէխսուրպունք, որպես բարեվարքության ապացուցման ցուցանիշ, ներառում է՝

1. իրավունքի չարաշահման բացառում,
 2. մոլորեցներու և խաթեության բացակայություն,
 3. սեփական իրավունքների իրականացման նկատմամբ հոգածություն ցուցաբերելու ճշտապահություն,
 4. պարտականությունների պարտաճանաչ կատարում:

Երրորդ՝ «Ճեղքերման բարեխորհությունը» վիճղիկացիոն հայցը սահմանափակելու միջոց է: Այդ ինստիտուտը նախատեսվել է առևտրային շրջանառության և իրավակարգի կայունությունն ապահովելու նպատակով: Այն սեփականատիրոջը (այլ օրինական տիրապետողին) սուկ իրավունք է վերապահում գույքը բարեխորհ ճեղք բերողից հետ պահանջել միայն օրենքով նախատեսված դեպքերում: Այդ դեպքում օրենսդիրը չտիրապետող սեփականատիրոջ իրավունքների պաշտպանության նկատմամբ առևտրային շրջանառությանն ու իրավակարգի պահպանությանը վերապահում է առավելություն¹:

Այլ նպատակներ է հետապնդում օրենսդիրը ձեռքբերման վաղեմության ուժով սեփականատեր դառնալու ցանկություն ունեցող անձից բարեխիղճ տիրապետություն պահանջելիս։ Վերջինս, որպես կանոն, վաղեմության հոսքի սկզբում զիտի իր տիրապետության անօրինականության մասին (անցել է սեփականատիրոջ կողմից գույքը ետ պահանջելու հայցային վաղեմությունը, գույքը ձեռք է բերել առոչինչ գործարքով և սեփականության իրավունք շառաչացնող այլ հիմքերով², գույքի սեփականության իրավունքը իր անվաճք գրանցված չէ և այլն)։ Բայց այդ հանգամանքը չի խանգարում ձեռքբերման վաղեմության ուժով անձին սեփականատեր ճանաչելուն։ Այդ ինստիտուտը, որի նպատակն է փաստացի տիրապետությունը վերածել սեփականության, ծագել է՝ հիմք ունենալով հասարակական կյանքի գույք գործնական պահանջմունքները և այդ շահերի բավարարման ու ապահովման մեջ է կայանում ձեռքբերման վաղեմության իրավաչափության իրավական արդարացումը³։ Այդ պատճառով էլ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականատեր դառնալու համար բավարար է եղեաբառը, անոնմեց և հրավասակ տիրա-

²Տե՛ս Մատեմիք Ա.Գ. Աշված հոդվածը, էջ 188:

³ Տե՛ս Ամազոն Յ. Ի. չշկառ պարզածք, էջ 108:

պետությունը՝ իրավաչափ պասիվ վարքագիծը, որը ձեռքբերման վաղեմության ժամկետն անցնելուց հետո «փաստացի տիրապետությունը կլարձնի իրավունք»¹:

Ձեռքբերման վաղեմությամբ տիրապետողին և բարեխիղճ ձեռք բերողին ներկայացվող պահանջների և նրանց իրավունքների պաշտպանության տարրերությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ հնարավոր չէ նույն չափանիշներով դատել բարեխիղճ ձեռք բերողի և ձեռքբերման վաղեմությամբ տիրապետողի կողմից գույքը ձեռք բերելու պահին ցուցաբերած վարքագիծ մասին։ Քաղ. օր. 187 հոդվածը քույլ է տալիս սեփականատեր դառնալ նաև անբարեխիղճ ձեռք բերողին, եթե նա իրականացնում է բարեխիղճ տիրապետությունը²։ Մենք համաձայն ենք Ե.Ա.Սոլիսանովի այն եզրակացության հետ, որ ձեռքբերման վաղեմության դեպքում փաստացի տիրապետողին բարեխիղճ ճանաչելու համար բավարար է, որ նա գույքը հանցավոր եղանակով կամ իրավակարգի և բարոյականության հիմքերին ակնհայտ հակասող ճանապարհով ձեռք բերած չլինի³։ Անհրաժեշտ է, որ տիրապետողը գույքը ձեռք բերելիս քույլ չտա հակարինական գործողությունները. չկիրառի բռնություն կամ չկատարի այնպիսի գործողություններ, որոնք ուղղված են նախկին սեփականատիրոջ վնաս պատճառելուն։ Տիրապետողի կողմից գույքի ձեռք բերման գրեթե այդպիսի մոտեցում է պահանջում նաև ՀՀ վճռաբեկ դատարանը։ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գույքը անձի փաստացի տիրապետմանը պետք է անցնի առանց որևէ բռնության գործադրման։ Տիրապետողը պետք է ունենա այն համոզմունքը, որ գույքը ձեռք է բերում օրինական հիմքով։ Տիրապետումը պետք է հիմնված լինի այնպիսի փաստի վրա, որը տիրապետողին կարող է տալ բավարար հիմք ենթադրելու, որ այդ գույքը տիրապետելու է որպես սեփականություն⁴։

Վերոհիշյալ հիմք է տալիս եզրակացնելու, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականատեր կարող են դառնալ ինչպես բարեխիղճ

¹ Տե՛ս Մասեվիչ Ս.Գ., նշված հոդվածը, էջ 189։ Հարկ է նկատել, որ Ֆրանսիական քաղաքացիական օրենսգրքի 2229 հոդվածը, որպես ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ծագման պայման պահանջում է, որ տիրապետությունը լինի »հանգիստ«։

² Տե՛ս նույն տեղը։

³ Տե՛ս Ածաւազական հարաբեկության մասին օրենսգրքի 2229 հոդվածը, որը պահանջում է գույքը ձեռք բերելու համար պահանջում է այնպիսի դատարանի առաջնորդությունը։

⁴ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների ընտրանի, հունվար դեկտեմբեր 2007, Հասոր 2, Երևան 2008, էջ 501-506։

այնպես էլ անբարեխսիղճ ձեռք բերողները, եթե նրանք բարեխսիղճ տիրապետողներ են:

Տիրապետությունը բարեխսիղճ համարվել չի կարող, եթե տիրապետողը տիրապետման ընթացքում, կատարում է անօրինական գործողություններ, օրինակ՝ կեղծում է փաստաթղթեր, թաքցնում է գույքը, խարում կամ մոլորության մեջ է զցում սեփականատիրոջը և այլն: Ձեռքբերման վաղեմությունը կիրառելի չէ նաև այն դեպքերում, եթե տիրապետողը խախտել է տիրապորկ գույքը (իմ կարծիքով ցանկացած գույք) սեփականության իրավունքով ձեռք բերելու կարգը¹: Օրինակ՝ ՀՀ վճռաբեկ դատարանը Ա. և Վ. Խողարյանների ընդդեմ Վ. Ավետիսյանի սեփականության իրավունքի խախտումը վերացնելու և պատասխանողին իր ընտանիքի անդամների հետ վտարելու պահանջի մասին գործով՝ արձանագրել է՝ «սույն քաղաքացիական գործով բացակայում է որևէ ապացույց, որով կարող էր հաստատվել Վ. Ավետիսյանի կողմից վեճի առարկա գույքի տիրապետության բարեխսդությունը, գործով հիմնավորված չէ, որ այդ գույքի տիրապետումը հիմնված է այնպիսի փաստի վրա, որը տիրապետողին կարող էր տալ բավարար հիմք ենթադրելու, որ նա այդ գույքը իր տիրապետության անցնելու պահից տիրապետել է որպես սեփականը»²:

Շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ բարեխսդությունը որպես սոցիալ-բարոյական կատեգորիա, իրավական ավելի մեծ արժենորվածություն ունի, քան իրավական ցանկացած սկզբունք: Այն քաղաքացիական իրավունքում է անդամների իրականացման անհրաժեշտ նախապայման է՝ հենքային կատեգորիա, որը բանականության, ազնվության, բարեվարքության հետ միասին ապահովում է քաղաքացիական հարաբերության օրինականությունը, սուբյեկտի կողմից դրսևորվող վարքագծի օրինաչափությունը:

¹ Տե՛ս նշված մեկնաբանությունները, էջ 289:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումների ընտրանի (հունվար-դեկտեմբեր2008).- Եր.»Բավիլոն« ՍՊԸ, էջ 100-101:

Tariel Barsegyan
*Head of the Chair of Civil Law, YSU
Doctor of Legal Sciences, Professor*

**THE ROLE OF GOOD FAITH IN THE PROCESS
OF REGULATION OF CIVIL RELATIONS**

In this article the author refers to the definition of good faith as a key category in Civil Law, particularly, the opinions of different authors pertaining to good faith namely, good faith as a social and moral category or principle of civil law are presented there. According to the author the consideration of good faith as a principle of civil law is baseless and it will be considered as a presumption of the behavior of subjects of civil law. It is a moral and ethical value which has legal worth, a moral imperative which serves as a basis for law and for any principle of law. Apart from the abovementioned, the author discusses the good faith in the context of two definitions: bona fide purchaser and bona fide holder. Analyzing the legislation he concludes that there are objective differences between the requirements presented to the bona fide purchaser and bona fide holder and the protection of their rights and these (differences) serve as a basis to claim that it is impossible to apply the same standard while judging the behavior displayed at the moment of obtaining the product by the bona fide purchaser and bona fide holder.